

61. ԿՏՐԻՃ ԵՎ ԴԵՎ

Կէլնի, կէլնի, կէլնի, չէլնե, կէլնի մեյ ճյոչ թագավոր: Էտա թագավուրուն կեր իրեյք խատ լաճ տոլս: Ուր զըմեն դովլաթի հետ, թագավուրուն կեր մեկ էլ խաս-բաղչա, դրախտիկ ավելի փառավոր, անմահական ծաղիկ ու ծաղկունք ինոր մեջ, անմահական աղրրներ էնտեղ. էլ ո՞րն ասեմ, ո՛չ մե բան պակաս, ոչ մեկ պայսութեն էն բաղչին:

Էտա խաս-բաղչի ծառերաց մեջ կեր մեյ խատ էլ անմահական խնձորի ծառ. ամեն մեկ խնձոր քյանճ մարդում գյլոխ: Ինոր խոտը, քյանճ վարդ-ռըհանի, չորս կողմ բռներ էր: Խնձորները որ գիշեր ծառիչ կաթուկ կաներ՝ խազար տարվան պառավ կաղ դևը կուգյեր կուտեր ու կտրորեր, անգյահ, անպահ, դեստյուրսուգ կմտներ բաղչեն: Թագավորը խասրաթով էր մնայե, որ ուր խաս-բաղչիչ ի՞նչ կէլներ, մեյ խատ խասուն խնձոր տիսնար ուտեր: Իդոր եամար էլ գիշեր-ցերեկ շատ դարդ ու մտռախ կաներ:

Օրրմ կկանչի ուր իրեյք լաճերն, կասի. - Ձեզնիչ վով որ կաղ դև սպանի, էն ծառիչ մեյ խատ խնձոր բերի ուտեմ, իմ հավասս առնեմ՝ էն իմ տեղ կնստի թագավորի թախթ, ինոր կանեմ իմ վալի-ահղ, թագավորութեն ինոր ի:

Առաջ ինոր ճոչ տղեն ի, կսիլախվորվի, կէրթա բաղչի մեյ պատի տակ պահ կդնի: Մի քիչ որ կմնա՝ քյուն կտանի՝ կինի խոր քյուն, տեղն ի տեղ կմնաս. դևը կուգյա, ուր արաածն կանի, ո՛րն կուտի, ո՛րն կտրորի կթողնի, կէրթա: Էն մեկել օր օրթանջա լաճ կէրթա խորն իմաց կուտա, կասի. - Թագավոր ապրած կէնաս, դարդ մի՛ անե, թե իմ ճոչը չկարաց՝ ես կէրթամ կսպաննեմ դևը:

- Հա, քյո ճոչը գնաց ի՛նչ արաց, մնաց թե տյու ի՛նչ պիտի անես:

Օրթանջա լաճն ի, կառնի ուր թուր թվանյքը, կէրթա: Ճոչի պես ինոր քյունն էլ կտանի, կմնա տեղն ու տեղ. դևը կուգյա, ուր սրտի ուզածովն խնձորներն թե՛ կուտի, թե՛ կտրորի, կէրթա:

Սրեն մնաց պզտիկ լաճուն, կհազրվի կէրթա մոտ խերն:

- Թագավոր ապրած կէնա, ամր արա, էսա դրյուս էլ ես էրթամ. կա՛մ ես կմեռնեմ, կամ դևին կմեռցնեմ, ախըր խնձորըմ կանամ բիրե քե խամար: Աստված օղորմած ի:

Խերը ձեռ կտրանի, մորուք կմաժմըժի, գյլուխ կժարժի, չգիտե ինչ ասի. տեսավ որ ինորից ճոչերը ինչ արին:

- Գնա, աստված քե խեստ, գնա տյու էլ քյո մարդութեն խառջի. ամմա խելքս տեղ չանե քեյզնից էլ:

Պզտիկ լաճն ի կսիլախվորվի, կառնի ուր զըմեն թուր թվանք, կէրթա խաս-բաղչեն, կտափի ծառի մը տակ, ափան մեջ կկտրի, պտղունցըմ աղ կխրի մեջ, որ մռմռա քյունը չտանի. քյանի որ մռմռա՝ էն էնկանդար էլ արթուն կմնա, ավելի ավելի մուղյաթ կէլնի ուր գործին. հեչ չի քնե:

Կես գիշերը կընցնի չընցնի՝ մեկ էլ կտիսնա որ խըշխըշալեն, ֆըշֆըշալեն պառավ դև կիջնի խաս-բաղչեն. կանի որ խնձորները զըմեն ժողովի, ուտի կամ տրորի՝ լաճը համան էն սհաթին վերեն կխասնի, կքաշի ուր նետ-անեղ, մեյ խատ որ կզանի դևուն՝ դևն ուր խայցին կխասնի: Լաճը կխասնի, բոկիս կբռնի, մեյ դըրբ էլ ուր թուրը կիջուցի վզին, կանի էրկու կտոր, կսպաննի: Կքաշի թուրն ու խանչալ, պրտուճ-պրտուճ կանի ինոր. էլ անվախ, աներկյուղ կժողվի խնձորները, կբերի թագավուրուն: Թագավորը որ կտիսնա ուր պզտիկ լաճու մարիֆաթը՝ կէլնի մեկ աշխրով. ինոր ուրախութենին էլ չափ ու սահման չկա, կուտի խնձորներիս մի քյանի խատ, ուր փափայքն կառնի. կօրհնի պզտիկ տղին, վաադ կանի, կասի. - Որ ես կմեռնեմ՝ իմ տեղը նստող իմ պզտիկ տղեն ի, խալալ սրտով ինոր եմ տվե:

Ճյոչ աղբերները որ կլսեն պզտկի կտրճութենը, խոր օրհնությունը ու վաադ՝ շատ խիստ կնեղճտեն, կբարկանան, ոխ-քեյն կպախեն ուրենց մեջ. իրիսանց բան չեն ասե: Շատ կմնա, քիչ կմնա՝ իրեյք աղբերն էլ օրըմ մեյտեղ կէրթան դաշտ ավ անելու, մեյ խատ պետ ժեռ քյարիմ՝ ռաստ կուգյան: Վոժը վոժի կուտան, թևը թևի, քյստը կշռջեն դեն, տակ կտիսնան որ ի՞նչ. մեկ անտակ մեծ խորըմ: Էրկու ախպեր պզտկիս գյաղտիկ կտստսան իրարու խետ. աղեկ էլ միանա կէլնի ինոնց. կասեն. «Էկեյք կախվենյք էսա խորի մեջ, տիսնանյք ի՛նչ կա ըստեղ, ի՛նչ չկա»: Դաշին ճոչ աղբեր կիջուցեն. դել կեսը խասած չխասած՝ կբոռա, կկանչի. «Հավա՜ր, հավա՜ր, մատա՜թ, իրիցա մրրկա, ծիկ տյուս խանեյք»: Ինոր կքաշեն տյուս. կկախեն օրթանճեն: Էն էլ ճոչի պես հավար, մատաթ կդնի, ինոր էլ կքաշեն տյուս: Զաթի ինոնց ըսկուն միանա պիտեր որ տյուս էլնեն, պզտիկ աղբերն կախեն մեջ խորին, կուրիսցուցեն:

Սրեն էկավ պզտկին. էնը ինոնցիս աջալա էր. կուզեր որ ըստեղ էլ մի ինչ-որ կտրճութեն աներ. ինոր կկախեն: Էն քյանի որ կբոռար կկանչեր, հավար-մատաթ կաներ, կասեր տյուս քաշեք՝ ինոնյք ամենևին ականջ չեն կախե, կկախեն որ կկախեն չյում Ֆրակ. էլմ՝ էն ժեռ քյար կթալեն վեր խորի բերնին, բերանը կկալեն, կթողնեն կէրթան իրենց գործին:

Ախրը վերջ ուրենց ոխն-քեն խաւնեցին պզտկից:

Պզտիկ ախբերն էր, խորի տակից, մութ-մութ կափըլփի պատերն, ձեռը կառնի դռանմ՝ որ չէ՝ դուռ կբացվի, լույս արեգակ գյո էն տեղ. կտիսնա ախագիյն ճոչ դնըմ քյանձ ուր առջի սպանածից էլ ավելի գարգանդուն, ըսկուն ի լենքյվե, շնթովե, որ բռներ ի տախտի օրթեն. մեյ խատ էլ խուրն-խրեղեն մարալ աղջիկ էնտեղ. դնը գյլոխ դրեր էր աղջկան ծնկյան վերեն կմոտար. ինոր խռալու ձենը բռներ էր էն խորի զըմեն մաղարեյք, մարդ բանըմ չէր լսե:

Էն աղջկա աչքը որ կինի դեխ էսա տղի երեսն՝ արմանյք-զարմանյք կմնա. կվախենա, կսարսափի, կափսոսա ինոր կտրիճ արևուն, որ էսասկընա նակաֆըլ իկե ըսկուն խավար տեղ:

- Ձո կտրիճ, ձո խողածին, - կասի աղջիկ, - էսա ի՞նչ չտեսած բան ի, որ օձն ուր պորտով, խավքն ուր թիվով չէր կանե էսա տեղ գյա, տյու ի՞նչխ էկար: Տյու քյո աստված, շոտ արա, շոտ էլի զատվիր ըստեղից, որ ճամբխով իկեր ես՝ էլի էն ճամբխով գնա. թե մկա որ դնը էլավ՝ քյո ճոչ պրտուճը ականջդ կթողնի. մի ասե թե էլ արև-արևալոս պիտի տիսնամ, էսա մաղարից անվնաս ազատվեմ:

Լաճը կասի. - Էյ, աղջի՛կ, ի՞նչ կասես, ի՞նչ վախ, զարմանյք, քյո սերն ի բերե ձիկ էսա տեղ. մի՛ վախենա, համան շոտ քյո դևուն խան վեր, խեստ ինոր կռվենյք, զարնվենյք իրար:

- Էսա դևուն կյութնի խոտ պիտի, որ կրակկուցեն, թալեն ինոր ոտներաց վրա որ զարթնի, թե չէ՝ զոռով չարթննար:

Լաճն ի, կինի մաղարի մեջ դես ու դեն, կկնդնի մի խոտ, կրակ կվառի, կտաքցուցի խոտ, կբերի կթալի վեր դևու ոտաց: Դևուն ըսկուն կերևա, որ մժիկմ՝ որ կծեց:

Դևը մեյ խատ ծմրկտանաց, ժաժ էկավ, վեր էլավ, նստավ, աչքերը ճըմռթեց, բացեց, առաջը տեսավ հողածին, առաջ մեյ խատ մռաց, կոտրտվավ, շոտ-մուռ էկավ, էլմ՝ իրիշկաց դեխ լաճու երեսն ի վեր. հալա չէր խավատա ուր աչքերաց:

- Օ՜, խողածին, տյու էսա տե՞ղ. լավ պրտյուճ ես իկե ձիկ:

Կտրիճն էլ կասի. - Խա՛, խա, վեր էլի, վեր կաց, ես իկեր եմ որ ես ու տյու իրարու խեստ կռվենյք, յա ես, յա տյու:

- Առաջ տյու զարկ, կտրիճ, - կասի դնը:

- Չէ, տյու զարկ, - կասի կտրիճ:

Կտրիճն անթարթ կկայնի. դև թոտուզմ՝ որ կզանի՝ լաճը հյուշտ, ըսկուն ինչ մժիկըմ կթոնի ինոր առջնից, բանըմ չէլնե: Տղեն էլ մեյ խատ որ կքաշի ուր թուրն կկանչի. յա Մարութա* բարձր Աստվածածին, թուրը կզանի թե չէ՝ աչք խտոց, բանալու չատ էլ չէ, դևուն կանի երկու կտոր, մեջքից կկտրի կանի կիմա-կիմա, կթալի մեկ յան:

Աղջկա սիրտն էլեր էր արուն, էրերուն. էն կվախենար որ դնը լաճուն

Սարուքե ճգնավորի անունով հեքիաթի հերոսները միշտ հուսադրվել են և նրա անունով էլ հարձակվում են իրանց ախոյանների վրա (Ծ.Բ.):

զայ անի, պատռտի ուտի՝ ինչխ որ շատերայ: Խո փառք աստծու, տղենը ազատվավ, դնը սատկավ: Մկա տյու տես աղջկա ուրախութեն, որ շատ տարիներով ինկեր էր դնու ճանկ, ազատում չկար, տյուս գյալ չէր էլնե: Տղեն ու աղջիկը աղեկմ՝ իրարու կտիսնան, կխավնեն:

- Ա՜խ կտրիճ, մենակ ես չեմ էսա տեղ. ձիկ ապես շատերն էլ կան, հալա մի գնա էն մեկել դռները բաց, տես վովեր կտիսնաս, էրկուսն էլ ձիկ ապես էսա չար դնը էսա յոթն տարի ի, որ բերեր ի բանդ արեր ի էսա քարատկի մեջ, փակեր ի զնդանի մեջ:

Լաճը կէրթա մեկել դռներն էլ որ կբանա՝ աղորթ որ էրկու խատ էլ ուր պես աննման, խուրն-խրեղեն աղջկներ կտիսնա էն տեղ. ախու չեն կանա տեղներից լըպըտա, տյուս ել-մուտ անե:

Կէրթա մեկ ուրիշ դուռ էլ որ կբանա՝ կտիսնա էն տեղ էլ պառավըմ. բարև կուտա, բարև կառնի, էն աղջկներ թասլիմ կանի պառվուն, կասի. - Մարե՛, ես քե որդի, տյու ձիկ մեր. էսա աղջկներ թող կենան քյո մոտ, մի քիչ ժամանակ մեյ տեղ կայցեք, չյում ես դառնամ գյամ:

Պառավն ինոր ճար-ճամբախ նշանց կուտա, կասի. - Կտրի՛ճ, կէրթաս էսա խորի մեջ, իրեյք խատ էծ ռաստ կուգյա, դաշին ոտդ թալ վեր սև էծուն, ինորից ոտդ թալ վեր կարմիր էծուն, ապա վեր սիվտակ էծուն, ինոնյք քե կթալեն տյուս, կինես լոս-աշխարհ, կազատվես:

Լաճը կէրթա կկնդնի էծերը, կմոռնա, առաջ ոտը կթալի վեր սիվտակ էծուն, էն էլ կթալի վեր կարմրին, կարմիրն էլ վեր սիվուն, լաճուն կթալեն սև-մութ աշխարհ, ճամբախ կմոլորի:

Տես որ աստված խեր տղին յար ի. կաս-կուտրաթ էտա սև աշխարի մեջ ինոր ռաստ կուգյա մեյ խարիր տարեկան ընցուկ պառավ կնիկըմ: Տղին որ կտիսնա՝ կուրախնա, կասի. - Բարով-խերով, կտրիճ, ասե՛ էլնենյք ես քե մեր, տյու ձիկ տղա, անենյք ապրենյք, չյում օրն մախուն մնանյք մեյ տեղ:

Օրըմ տղեն կխառնուցի. - Մարե՛, - կասի, - էսա ձեր աշխարի ինչի՞ էսասկընա մութ, դումանը բռներ ի, ինչի՞ ճյուր չկա, արև արևալոս չկա. չէ՞ որ տյուք էլ աստծու ստեղծած եք:

- Ա՜խ, որդի, - կասի պառավ, - ի՞նչ ասեմ, մեր մեղքիյցն ի, էսա քյանի տարի էլավ որ մեյ յոթն գյլխեն չար դնը նստեր ի մեր աղբրի դեմ, չթողնե որ ճյուր գյա. առծիվմ՝ էլ կա, որ բռներ ի արևու դեմ, չթողնե որ լոս էլնի մեզ վրա:

Էտա կտրիճն ի, որ սիրտը շատ կյավի՝ կասի պառվուն. - Մարե՛, գնա՛ ձեր երկրի թագավուրուն ասա, որ ձիկ իզին տա, ես էրթամ էն էրկսին էլ սպանեմ, ձեր երկիրն ազատեմ մթնից և ջրի պակսութենից:

Պառավը կէրթա թագավուրուն իմաց կանի, ամր կառնի ինորից, կուգյա լաճուն կիմացուցի, որ հազրվի էրթա ինոնց վերեն:

Առաջ կէրթա դեխ դն, կտիսնա որ փռվեր ի վեր աղբրի ական. մարդ և անասուն սեզը ինոր ախրց-սարսափից չկանա մոտ գնա ջրին: Մեյ զանելուց ինոր կթնջկըցուցի, կսպանի: Կտիսնան որ գեյտի նման

աղբյուրը կփոթնի կուգյա մեջ երկրին. ամեն մարդն էլ շատ կուրախնան և իրարու ավետիս կուտան, որ դն սպանվեր ի: Դեն սպաննելուց հետո, մեկէլ օր կտրիճ տղեն վեր կառնի ուր նետ-անեղն, կէրթա դեխ առծիվն, նշան կդնի. մեյ զանելուց էլ առծիվն էրկնուց երեսից տակ կբերի. արևն էլ ուր շառավիղքն ու շողերը կբանա վեր արարած աշխարհին, ամենքը կտիսնան ու շատ կուրախանան. սև-մութ աշխարհ կլուսավորվի:

Էն երկրի թագավորը որ կտիսնա էսա լաճու դոչաղութին՝ կմտնի սիրտ, կկանչի ուր երեսն, կասի. - Կտրի՛ճ, ուզի, տիսնամ թե քյո ուզածն ի՞նչ ի:

Տղենը բանըմ չուզե, կասի. - Թագավոր ապրած կենա, մենակ քյո սաղութեն կուզենյք:

Թագավորը կուզի որ ուր մեկ խատ աղջիկն ինոր տա, պսակի. շատ կպատվի, շատ էլ կմեծարի, որ անի ուրան փեսա, ամմա լաճը չուզե, կասի. - Թագավոր ապրած կենա, քյոնը քե թող մնա, ես հալա շատ-շատ մուրազներ ունեմ, խոսք չեմ տա:

Կէլնի որ մեյ քիչ ժամանակից վերջ էսա թագավորը խետ մեկ ուրիշ թագավորի կռիվ կբանա: Լաճն էլ կսիլախվորվի, խետ ասքյրին կէրթա կռիվ:

Էրկու թարաֆիցն էլ շատ զոռ կռվի են պատրաստվե: Շամաթեն, հուրայ-հրոցն աշխարհ բռներ ի, սպանողը սպանողի, զանող զանողի, տանող տարողի ի, մարդ ուր գյլխի տերը չի. աստված հիմտաթ էլնի մեր էսա կտրիճ տղին:

Կռվի են տայք ժամանակ, կտիսնա որ ուր էրկու աղբերներն էլ մեջ կռվին. բերանը կմնա բաց. էլ չգիտե ի՛նչ անի, ի՛նչխ անի, որ ուր աղբերներ սպանվելուց ազատի: Ախըր սիրտն էլ չխամբիրե. համան կթողնի ուր կռվու կողմ, կվազի դեխ աղբերներ, կուզի ազատի կռվի սասումից, ամա ինոնյք իսոր չեն ճանչնա:

Ինքն ուր մեյ կիրիշկա ինոնց, կծողա, կծողա, սիրտը կպատռի, չկանա ուրան բռնե. վզներով կփաթաթվի, իսոր ինոր կպաքի, վերջ որ էլ չկանա՝ ուր սրտին ու ջիկրին խաբար կանի. - Ծո տնավերներ, չէ՞ որ ես ձեր եղբայրն եմ, - կասի, - ձեր պզտիկ եղբա՛յր, համա տյուք ձիկ չեք ճանչնա: Տյուք ձիկ փոս փորիցիք, խորի մեջ թալիք. ամմա աստված ձիկ ազատեց:

Էսա եղելութեն որ կլսեն երկու կողմի մարդերն էլ՝ կռիվ կդադերցուցեն, կռվարարները կբարուշեն, մայնա կէլնի:

Ձենը կէրթա թագավուրուն, կասեն. - Քյո պզտիկ տղեն իկե:

Էն որ կլսի՝ էլ չգիտե ինչ անի. շոտ-շոտ ուր թախտից կէջնի, կուգյա դեխ պզտիկ լաճ, վզնով կիյնի, ուր կարոտն կառնի: Պզտիկ լաճը ուր գյլխու գյայած զըմենը կպատմի խորն: Իրիյք աղբերն էլ մեյտեղ կէրթան, են խորի բերան կբանան, կմտնեն դնու մաղարեն, կծողվեն սնդուկներով լի ոսկի, արծաթ, ակունք, ջավահիր, կբառնան ջորիներաց, Դառնեն էն տեղաց իրեյք խորոտ աղջկներն էլ, կուգյան իրենց տուն:

Աղջիկներաց զըմենի պզտիկն պզտիկ աղբերն կառնի, ինորից ճոչն՝

օրթանջա աղբերն, ամենից մեծ աղջիկն էլ մեծ աղբոր համար: Կպսակվեն, իրեյքն էլ կխասնեն իրանց սրտի մուրազին:

Թագավոր կկանչի ուր զըմեն վազիրները, ինոնց առջև կկպաքի պզտիկ տղի ճակատը, ուր ձեռնով կհանի թագն, կդնի ինոր գլխին. կնստեցուցի թախթի վերա, կանի ուր տեղ թագավոր, ինչխ որ խոստացեր էր:

Աստծուց իրեյք ոսկի խնձոր իջավ, մեկն ասողաց, մեկն լսողաց, մեկն էլ հեռու ականջ արողաց: